ՄԳՏԿ անդամ պետությունների կառավարիչների հանձնաժողովի նստաշրջանը Մոսկվայում
/2009 թ., դեկտեմբեր /

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը 2009 թվականի դեկտեմբերի 8-ին Մոսկվայում մասնակցեց Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) անդամ պետությունների կառավարիչների խորհրդի 50-րդ նստաշրջանին՝ որպես կոորդինացիոն կոմիտեի անդամ:

Նստաշրջանին մասնակցում էին ՄԳՏԿ անդամ կողմերի՝ Կանադայի, Եվրամիության, Ճապոնիայի, Կորեայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Հայաստանի Հանրապետության, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի ներկայացուցիչները:

Օրակարգային հիմնական հարցերից էր ծրագրերի ֆինանսավորման վերջնական աղյուսակի հաստատումը: ՄԳՏԿ-ն հաստատեց ՌԴ-ից, Հայաստանից եւ Տաջիկստանից ներկայացված ծրագրերը՝ մոտ երեք մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ:

Հայաստանից ներկայացված ծրագրերից ֆինանսավորվեցին չորսը, որոնցից մեկը կանոնավոր ծրագիր էր, իսկ երկուսը՝ գործընկերային:

Նստաշրջանի ընթացքում քննարկվեցին նաեւ հարցեր՝ կապված ՄԳՏԿ հետագա ծրագրերի եւ գործունեության հետ, ինչպես նաեւ ՄԳՏԿ վերակազմակերպման աշխատանքային հարցեր:

Պարոն Հարությունյանը մասնակցեց նաեւ ՄԳՏԿ 15-ամյակին նվիրված հոբելյանական արարողությանը:

Այցելության ընթացքում ԳՊԿ նախագահը հանդիպել է նաեւ Մոսկվայի կառավարության գիտության եւ տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտեի գլխավոր տնօրենի տեղակալ, Մենեջմենթի միջազգային ակադեմիայի թղթակից անդամ Գեորգի Յուզբաշյանցի եւ Դեղագործական ռեակտիվների ինստիտուտի տնօրեն Հրանտ Ալահվերդովի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են համագործակցության ծրագրեր, պայմանավորվածություն է ձեռք բերվել կնքել երկկողմ գործակցության պայմանագիր: